ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
08.05.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/4 գնման պայմանագրի

ք. Երևան «17» 10 2025թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ.Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Կ. Հովեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի կրթական օբյեկտների վերանորոգման/հիմնանորոգման տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 08.05.2025թ. կնքված ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/4 գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2 և 7.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյան նոր խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13 289 000 (տասներեք միլիոն երկու հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամ, ընդ որում.

- Ագարակի Տ. Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց (1129.36 մ^2) – 1 747 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ,
- Աղձքի միջնակարգ դպրոց (1702 մ^2) – 2 380 000 (երկու միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ,
- Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց (759.83 մ^2) - 1 339 000 (մեկ միլիոն երեք հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ,
- Քուչակի միջնակարգ դպրոց (1838 մ^2) – 2 530 000 (երկու միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ,
- Մելիքգյուղի միջնակարգ դպրոց (2059.35 մ^2) – 2 775 000 (երկու միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ,
- Կաքավաձորի միջնակարգ դպրոց (1826.53 մ^2) – 2 518 000 (երկու միլիոն հինգ հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ:»

1.1.2 Պայմանագրի N 1 հավելվածում «14 914 000» թվերը փոխարինել «13 289 000» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	Արագածոտնի մարզ ք. Աշտարակ,
կառավարական տուն 3	Շահազիզի 35
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 220043330566500
Հ/Հ 900011057859	ՀՎՀՀ 05010092
ՀՎՀՀ 02565827	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Գ. Եղիազարյան	_____ Կ. Հովեյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.